

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱԻԱՆԴԱԲԱՐ Ս. ՄԵՍՐՈՊԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐՈՒՈՂ ԱԿԵՏԱՐԱՆԻ ՇՈՒՐՋ

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Սուրբգրական երկաթագիր պատառիկների վերծանութեանը նուիրուած աշխատութեան առաջաբանում Մեսրոպ եպս- Տէր-Մովսիսեանը Նոր Կտակարանից պահպանուած հատուածների վերծանութիւնը կարեւոր չի համարում, որովհետեւ Աւետարանի մի քանի ամբողջական ու հին օրինակներ են յայտնի¹: Նիկողայոս Մառը գտնում է, որ խնդիրը հին ու ամբողջական օրինակների շատութիւնը չէ, այլ՝ որ նրանք աւանդական² բնագիր են ներկայացնում եւ «մեզ իրապէս հնաւանդ՝ ս. Գրոց նախակգրնական հայկական քարգմանութեան վերապրուկների քիչ միւս են տալիս»³: Ուստի հնաւանդ բնագիր պրպտելիս կարեւորութիւն պիտի տալ նաեւ Աւետարանի երկաթագիր մագաղաթեայ պատառիկներին, թէկուզ նրանք եւս ընկալեալ⁴ բնագիր ներկայացնեն, առաւել եւս՝ երբ «այդ տեքստը նոյնպէս ուղղագրօրէն տակաւին ճշգրտուած չէ»: Եւ յիրաւի, հակառակ մասնագիտական գրականութեան մէջ հնագոյն ամբողջական Աւետարանների յաճախակի յիշատակութեան (Մլքէ թագուհու, Լազարեան Ճեմարան-ինստիտուտի, Էջմիածնի, Վեհամօր, Վեհափառի եւ այլ ձեռագրեր), աւելին՝ նրանցից մի քանիսի նմանահանութեամբ հրատարակուած եւ անգամ վերահրատարակուած լինելուն, նրանք ընթերցուած ու համադրուած չեն, չունեն գիտական քննական հրատարակութիւն⁵, ուստի առ այսօր գիտական գործածութեան մէջ ընդհանրացած բնագիրը կա՛մ Յովհաննէս վրդ. Զօհրապեանի (1756-1829) 1805ին «ըստ ճշգրիտ քարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկական բարբառ» կատարուած հրատարակութիւնն է⁶, կա՛մ Հայր Արսէն Բագրատունու (1790-1866) «ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց եւ յոյն բնագրաց» (Վենետիկ, 1860) տպագրութիւնը եւ կա՛մ Աստուածաշնչի Ամերիկեան Ընկերութեան պատուէրով բանասէր Մատթիա Գարազաշեանի (1818-1903) 1895ի հրատարակութիւնը: Այս երեքից միայն Զօհրապեանն է, որ տողատակում ունի 5 կամ 6 ձեռագրի տարընթերցումներ՝ «ոմանք», «բագումք» անորոշ եւ «Ոսկան» հասցէակիր ցուցումներով⁷:

Աւետարանի բնագրի հայերէն թարգմանութեան քննական ուսումնասիրութեան եւ վերականգնման ընդգրկուն խնդիրն այսօր էլ օրակարգի վրայ է, ուստի հնաւանդութեան կնիք կրող երկաթագիր կամեցածդ գրչագիր, ամբողջական կամ հատակոտոր, արժանի է մասնաւոր գիտական ուշադրութեան: Բազում առումներով քննութեան առնելիք այդպիսի մի ամբողջական գրչագիր համեմատաբար նոր ժամանակներում մոտք է գործել Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Հին Զեռագրերի Մատենադարանի հաւաքածոյ:

Քարտում գրանցուած տեղեկութեան համաձայն՝ ձեռագիրը «Ստացուած է Իրանի Ղարղուն գիւղի քահանայ Տաճատ Յովհաննէսի Մարկոսեանից՝ ՀՍՍՀ Արտաքին գործոց մինիստրութեան միջոցով 12.08.1969թ.»։ 286v–287r էջերում եղած յետագայի յիշատակագրութիւնները հնարաւորութիւն չեն տալիս պարզելու թէ երկար դարեր ձեռագիրը որտեղ է գտնուել, եւ ապա Պարսկաստանում ինչպէս է յայտնուել, բայց փոխարէնը բուն յիշատակարանների անխաթար պահպանուածութեան շնորհիւ յստակ գիտենք պատուիրատուի եւ գրչի ով լինելը, ուստի մասամբ եւ գրչութեան վայրը: Չորս տարբեր էջերում՝ 1v, 85v, 286v եւ 287v, եղած յիշատակարաններից երկուսում (286v, 287v) Անանիա անունով մի անձ յայտնում է իր պատուիրատու լինելը (բոլոր յիշատակարանները գրուած են ձեռագրի գրչութեամբ, դարձեալ երկաթագիր, մասամբ աւելի մանր): Յիշատակարանները ընթերցուած ու հրատարակուած են հանգուցեալ Արտաշէս Մաթեւոսեանի կազմած ժողովածոյում՝ երկուսը իրեւ ժ. դարի մատենագիր Անանիա Նարեկացուն պատկանող նախօրինակից, կամ միջնադարեան տերմինով՝ գաղափար օրինակից ընդօրինակուած, երկուսը՝ պատուիրատու Անանիա Վարազացուն պատկանող⁸: Արդարութիւնը պահանջում է ասել, որ յիշատակարանների սկզբնական եւ անսխալ ընթերցումը կատարել է ձեռագրի Մատենադարանի հաւաքածոյ մոտքը արձանագրող եւ քարտը կազմող ձեռագրագէտ Օննիկ Եգանեանը: Ճիշտ է, նա պատուիրատուի անունը սկզբնաբար կարդացել է Անանիա Սարազացի, բայց եւ ծանօթագրել, թէ Վ.ի աջ երուստը վերականգնելիս Վարազացի պիտի ընթերցել: Յիշատակարանների Անանիա Նարեկացուն եւ Վարազացուն տարբերակելու անդրանիկ հիմնաւորումը կատարել է Մաթեւոսեանը նախնական մի յօդուածում⁹: Եւ յիշուի, պատուիրատու Անանիան իր մասին չէր ասի «Անանիայի Նարեկացոյ աստուածազան հոգտորի եւ հօր վարդապետի է սուրբ Աւետարանս այս: Եւ որք ընթեոնութ՝ յիշեսցիք ի տէր ստացաւ սորին, աղաչեմք» (էջ 87v): Ձեռագրի բուն ընդարձակ յիշա-

տակարանում ստացողն իրեն կոչում է Անանիա Վարազացի եւ հակառակ նախորդում եղած յախուռն մեծարման՝ «նուստ ի կրաւնաւորս եւ տրուպ եւ կրտսեր ի գիտնաւորս» (286v): Ուրեմն՝ իսկապէս երկու տարբեր Անանիաների մասին է խօսքը, ինչպէս իրաւացիօրէն ընդունել են այս ձեռագրին անդրադարձած մասնագէտները¹⁰: Նարեկացի Անանիայի «աստուածազան հռետոր» եւ «հօր վարդապետ» լինելը վկայուած է ժամանակակիցների կողմից նրան տրուած բնութագրութիւններում եւս¹¹, մինչդեռ Վարազացի Անանիայի մասին մատենագրական այլ աղբիւրներից տեղեկութիւններ չունենք: Գիտենք, սակայն, թէ Ժ.-ԺԱ. դարերում Վարագը յիշուի մշակութային ճանաչուած գործիչներ ունեցող դպրութեան օջախ է եղել: «Վկայաբանութիւն սրբոյն Ատոմայ եւ որդւոյ նորա Վարոսայ եւ Ներսէսի եւ նոցին ընկերացն» երկի խորագրում եւ որոշ ընդօրինակութիւնների յիշատակարանային մասում ասուած է, որ նրա հեղինակը Հայր Տաճատ Վարազացին (var Վարագեցին) է. «եւ գիր վկայութեան նոցա ոչ եւս պատմէր ի միջի մերում մինչեւ ի ժամանակս ինչ ապա գտեալ եղել յաւորս Կեմատրոյ, սպասաւորի սրբոց Ատոմեանց ի ձեռն հոգետր առաջնորդի տեառն Տաճատայ Վարազացւոյ...»¹²:

Այսպիսով, եթէ 1069ին ընդօրինակուած ձեռագրի գաղափար օրինակը պատկանել է Նարեկայ վանքի վանահայր Անանիա Նարեկացուն եւ, բնականաբար, գտնուել նոյն Նարեկայ վանքում, ապա նրանից կատարուած ընդօրինակումը եւս կարող էր կամ պէտք է տեղի ունենար Նարեկում, ուստի արդարացի է N10434 ձեռագրի գրչութեան տեղի «Նարեկայ վանք» վերականգնումը, որ եւ կատարուած է այս ձեռագրին վերաբերող արժարժումներում:

Անանիա Վարազացու ընդարձակ յիշատակարանում գրչութեան վայրը չի յիշատակուում, սակայն պատմւում են գաղափար օրինակին վերաբերող այնպիսի իրողութիւններ, որոնք, եթէ ստուգապատում են՝ հետազօտողին տեղափոխում են 600 տարի առաջ՝ ոսկեդար: Կարդանք յիշատակարանի այդ հատուածը.

Ի ՇԺԸ (1069) քուաբերութեանս Հայոց, ես Անանիա Վարազացի՝ նրաւստ ի կրաւնաւորս եւ տրուպ եւ կրտսեր ի գիտնաւորս, ցանկացաւ եղէ սրբոյ Աւետարանիս եւ մեծաւ փափագանաւք եւ սրտաջան յաւժարութեամբ իմով, զոր ունէի յոգւոջ իմում ի բազում ամաց զցանկութիւն սորին եւ զմեծ անձուկ սերն որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին սուրբ, ըստ իմում կարի քրիստոսասէր գոլով, ետու գրել զսուրբ Աւետարանս Յովհաննէսի գրչի, եւ ստացայ զսա իմոց արդար եւ իրաւացի արդեանց, զոր

ի վեր համարիմ, քան զամենայն աշխարհս եւ զփառս, եւ զմեծութիւն սորա, եւ հանապազ ուրախանամ եւ փարթամանամ անթափելի ճոխութեամբ ի սորին աստուածային եւ անհամեմատ լիութենէս: Մանաւանդ վասն ստուգութեան սորին եւ ընտրութեան բանի եւ հրամանի, եւ տնահատի եւ ամենայն արուեստի, որ էր վկայեալ արինակն յամենայն գիտնականաց Հայոց, զոր ասէին յաւանդութենէ գրեալ է ծեռամբ սրբոյն Մաստրովբայ վարդապետի եւ թարգմանչի: Եւ իմ այսմ ամենայնի հասու եղեալ եւ տեղեկացեալ վասն լատութեան սորա, զոր ոչ արժէ աշխարհի զփոքրիկս զայս, որ է մեծ եւ պատուական ի սրտի իմում եւ ամենայն գիտնականաց, որք ճանաչեն զգաւրութիւն սորա: Եւ ես զամ մի ողջոյն աշխատասէր վաստակաւք իմով, անձամբ եւ ծախսիք շատ ջանացեալ մինչեւ ի կատարումն գրչութեան սորա, զոր ստացայ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ յուրախութիւն ընթերցաւոյ, յիշատակ ինձ եւ ծնաւոյց իմոց եւ եղբարց, կենդանեաց եւ նմջեցելոց: Արդ աղաչեմք զամենեւեան, որք ընթեոմութեւ լուսաւորիք, զիս՝ Անանիա յիշելոյ արժանի համարիք:

Ընդ միմ եւ ես աղաչեմ՝ անպիտան գրիչս, յիշել զիս եւ ծնաւոյսն իմ, եւ Աստուած ամենեցուն ողորմեսցի, ամէն¹³:

Յիշատակարանի մեր կողմից ընդգծուած դրուագը մի քանի յոյժ կարեւոր տեղեկութիւն է հաղորդում, մասնաւորապէս՝

ա) Անանիա Նարեկացուն պատկանող եւ ընդօրինակման ենթարկուող գաղափար օրինակը ստոյգ (իմա նախնական, ոչ վերանայուած կամ միջամտուած), յստակ (բառուբանով ընտիր), պատգամ, պատուիրան հանդիսացող (Աստծոյ հրաման) նմուշի համարում է ունեցել:

բ) Բնագիրը եղել է տնատուած, ասել է թէ ունեցել է դրուագների (նաեւ գլուխների) հնաւանդ համարակալում, որ նոյնութեամբ ներկայացուած է ընդօրինակութեան մէջ:

գ) Ընտիր է համարուել նրա «ամենայն արուեստի» (իմա զարդարանքի) կնիք կրելը (խաչ, խորան, զարդագիր, բաժանարար պատկեր, կարմրադեղով ցուցում եւն.):

դ) Ժամանակի հայոց գիտունները տեղեակ են եղել գաղափար օրինակի գոյութեանը եւ նրա՝ Մաշտոցի ձեռքով գրուած լինելու աւանդութեանը (ուրեմն այդ մասին գրաւոր յիշատակարան չի ունեցել):

ե) Պատուիրատու Անանիա Վարազագին վերոբերեալը իմանալուց եւ հաւաստիանալուց յետոյ է («իմ այսմ ամենայնի հասու եղեալ եւ տեղեկացեալ վասն լատութեան») մի ողջ տարուայ վաստակը յատկացնում ընդօրինակութիւն ունենալուն:

Յիշատակարանի այս հաղորդումները կասկածի տակ առնելու հիմքեր չենք տեսնում, որովհետեւ 500-600 տարուայ հնութեան գրչագրի գոյութիւնը բնաւ անկարելի չէ, մանաւանդ որ այդպիսիք քիչ չեն նաեւ մեր օրերի հաւաքածոներում: Մաշտոցի ձեռքով գրուած լինելու աւանդութիւնը եւս ստուգելի է. նման բովանդակութեան մի այլ յիշատակարան ունենք 1113ից, երբ Կիրակոս անուն պատուիրատուն Գէորգ գրչին Դրագարկում ընդօրինակել է տալիս «ի ստոյգ եւ յ[ը]նտիլ գաղափարէ սրբոյն Սահակայ թարգմանչի» Աւետարանից¹⁴: Եւ ապա՝ Մաշտոցի «Մաստրովբոս» յորջորջումը այնքան հազուագիւտ է հայ մատենագրութեան մէջ, որ միայն յունական գրաւոր աւանդոյթին քաջածանօթ հայոց վարդապետական միջավայրում կարող էին այն իմանալ եւ գրառել: Իսկ որ Նարեկավանքի վանականները ճանաչում էին յունական աշխարհը՝ ակներեւ է նաեւ Անանիա եւ Գրիգոր Նարեկացիների մատենագրական աղբիւրներով: Տեղական սոսկական աւանդութիւնը անուանակոչման այդ տարբերակը յօրինել կամ անառիթ մտաբերել չէր կարող¹⁵:

Չեռ. 10434, էջ 138v, Աւետարան ըստ Ղուկայ

Ա 138v-144r	79 ^x ճանապարհ
2 ^x ականատեսք	
3 Թեովփիղէ	Բ 144r - 147v
4 ^x զճըշ-մարտութիւն	1 յԱւգուստոս
8 քահանայալն	^x աշխարագիր
11 ^x խնկոցն	2 աշխարագիր
14 ի ծննդեան	3 յաշխարագիր
19 Գաբրիէլ	4 Բեթղեմ
22 թէ	5 աշխարագիր
23 ^x պաշտամանն	8 ^x գիշերոյ
25 ^x յորս	10 ժողովրդեանն
26 Գաղիղեացոց	15 ցԲեթղեմ
31 ^x կոչեացես	24 պատարագ
35 եկեցէ	31 ժողովրդոց
^x ի քէն]	37 պահովք
39 ^x լեռնակողմն	41 ծնողք
43 եկեցէ	44 դրացիսն
44 քո	50 քանսն
46 ^x ասէ	
62 ակն արկանէին	
68 զի յոր	

Գ. 147v – 150v	31 Մեղքայն
1 ի] (նախավերջին)	37 Ենովքայն
4 եւ] (վերջին)	Մաղաղաեղին
11 ^x ոչն	
13 ^x զհրամայեալն	Դ. 150 v - 154r
16 մկրրտեմ	10 պարիել
մկրրտեսցէ	13 ժամա[նա]կ (տեղը պահած է)
19 չարեաց	16 ^x յաւուրն (ն-ն աւելացուած է)
20 բանդի	^x շաբաթուց
21 ժողովրդեանն	23 ապաքէն (քէն-ը աւելացուած է տողի վրայ)
մկրրտելն	բժիշկ բժրշկեա
24 ^x Յովսէփայն	28 ժողովրդեանն
25 ^x Ամովսայն	29 զնա (ա-ն լրացուած է նոյն ձեռքով)
Նաումայ	32 էր (աւելացուած է նոյն ձեռքով)
26 Մաաթայն	33 ժողովրդեանն
Յովսէփայն	34 եւ] (առաջին)
27 Չորաբաբէղին	38 ժողովրդեանէ
^x Ներեայն	41 բը – ժրշկէր

Թուարկուած պարագաները, կարծում ենք, ուսումնասիրողին մըղում են բնագրական համեմատութեան, որով կարելի կը լինի պարզել նրա նախնականութեան՝ Սահակ-Մաշտոցեան ժամանակներին վերաբերելու հաւաստիութեան աստիճանը։ Բնականաբար՝ համեմատութեան առեւիթքը Զօհրապեան հրատարակութիւնն է¹⁶։

Ղուկասի Աւետարանի Ա-Դ գլուխներում N 10434 ձեռագիրը Զօհրապեանի նախընտրած բնագրի համեմատութեամբ տալիս է 69 միաւոր տարընթերցում, որոնցից 20ի համապատասխանութիւնը գտնում ենք տողատակի ընթերցումներում (այդ միաւորները մատնացուցել ենք աստղանիշով)։ Հետեւաբար, 1805ի հրատարակութեան ձեռագրերում չի եղել այնպիսի մի օրինակ, որը ունենար N 10434 ձեռագրի տարբերակիչ 49 ընթերցումը։ Այս փաստն արդէն մեզ մղում է պատասխան որոնելուն։ Տարընթերցումների որոշ խումբ վերաբերում է որոշեալ-անորոշ առումին կամ դիմորոշ նի գործածութեանը (դրացիսն, բանսն, պաշտա-

մանն, կոչեսցես, եւն.): Բաւարար Հետեւողականութիւն չենք տեսնում բառամիջի ու>ը Հնչիւնափոխութեան արտայայտման դէպքերում՝ ժողովրդեան, ժողովրդոց բազմակի գործածութեան դիմաց չունենք սպասելի խ(ը)նկոց, ծն(ը)նդեան, որ առկայ է Զօհրապեան բնագրում, թէեւ որոշակի նկատելի է N 10434 ձեռագրի գրչի հակումը բացելու կիսաձայն ըի ներկայութիւնը (մկըրտեմ, մկըրտեսցէ, մկըրտելն), իհարկէ, եթէ այդ ըն գաղափար օրինակում տողադարձի մնացուկ չէ: Պատահականութիւն չպիտի համարել եկեսցէի փոխարէն երկու անգամ եկեցէ (Ա 35, 43) գրութիւն ունենալը, որ ամենայն հաւանականութեամբ կենդանի արտասանութեան հետեւանք է, ինչպէս որ այդ ներկայ է աշխարագիր (Բ 1, 2) Բեթղեմ (Բ 4, 15) գրութիւնների մէջ եւս: Բառային էական տարբերութիւններից է Զօհրապեանի «...քանզի որ ծնանելոցն է ի քէն սուրբ է եւ որդի աստուծոյ կոչեսցի եւ նախադասութեան «ի քէն» մասնատրեցումի բացակայութիւնը մեր ձեռագրում, որ միանգամայն յարիւր է յունարէն բնագրին՝ διο και το γεννώμενον ἅγιον κληθήσεται υἱοῦ θεοῦ...»:

Այդ պարագայում, թերեւս «ի քէն»ը գալիս է նախնական թարգմանութիւնից եւ կամ՝ արդիւնք է յետագայ ոճաւորման փորձի (վրացերէն DE եւ C տարբերակներում նոյնպէս «ի քէն » չկայ):

Նոր կտակարանի այս կարգի հատուածական դիտարկումների հիմամբ չափազանց վաղաժամ է որեւէ պատմա-մշակութային եզրակացութիւն կատարելը: Նախ պէտք է համեմատութեան առնել բոլոր վաղագոյն գրչութիւն ունեցող ձեռագրերը եւ յստակ սահմանել, թէ քանի խումբ կամ խմբագրութիւն են նրանք ներկայացնում, ապա ճշգրտել նրանց ձեւաւորման ժամանակագրական յաջորդականութիւնը, իսկ այնուհետեւ քննութեան հարց դարձնել ո՛ր խմբագրութիւնից գալու եւ խմբագրութիւնների ծնունդ տալու ոչ դիւրին պարագաները: Այս առումով նորից ու նորից պիտի կարդալ երանայիչատակ հայագէտ Յակոբ Անասեանի Աստուածաշունչ Մատենի Հայկական Բնագիրը աշխատութեան եօթերորդ բաժինը՝ «Ի՞նչ է Մնում Անելու՝ Բնագրի Վերականգնման Բնագաւառում», որ աւարտուում է հայագիտութեան նոր սերնդին պարտաւորեցնող յորդորով. «Հայկական քարգմանութեան դասական բնագրի վերականգնման խնդիրը գտնուում է առաջին գծի վրայ եւ մնում է հրամայական պահանջ, որի իրագործման համար մեր օրերում կան աւելի շատ հնարատրութիւններ, քան կային մեր դարի սկզբներից: Դրա մասին մեր մասնագէտները պիտի մտածեն թէ՛ յօգուտ հայրենի գիտութեան եւ թէ՛ ի շահ ոչ միայն հայ-յունական, այլեւ հայ-ասորական, հայ-վրացական մշակութային հնօրեայ կապերի

ճիշտ լուսաբանման, կապեր, որոնց անխաղախ վկան է հանդիսանալու Սահակ-Մեսրոպեան վերականգնուած բնագիրն իր գիտական կերպարանքով: Հայագիտութեան հերթական խնդիրներից մէկը պէտք է լինի Աստուածաշունչ մատեանի հայ դասական բնագրի վերջնական վերականգնումը»¹⁷, իսկ մինչ այդ անհրաժեշտ է ճանաչել հին ու ընտիր գրչագրերի բնագրական ընթերցումները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Rukopisnie Otrivki Armianskoi Versii Vetkhogo Zaveta Lapidarnim Pismom, Izdal Episkop Mesrop, (Զեռագրային երկաթագիր հատուածներ Հին Կտակարանի հայերէն թարգմանութեան), Պետրոգրադ, 1915, էջ 11:

² Մառը գործածել է shablonnest արտայայտութիւնը:

³ N. Marr, "Otrivok Armianskogo Pergamentnogo Evangelia Lapidarnim Pismom" (Հատուած՝ Հայկական Մագաղաթեայ Երկաթագիր Աւետարանի), տե՛ս՝ N. Marr, Kavkazski Kulturnii Mir I Armenia (Կովկասեան Մշակութային Աշխարհը Եւ Հայաստանը), Երեւան, 1995, էջ 15, 206: Աւետարանների թարգմանութեան հարցերին նուիրուած ուշագրաւ աշխատութիւն է հրատարակել Հայր Պօղոս Խսապալեանը (տե՛ս նրա՝ Տատիանի Համարարբառն Եւ Հայերէն Աւետարաններու Առաջին Թարգմանութիւնը. Քննական Ուսումնասիրութիւն, Վիեննա, 1937):

⁴ Մառը գործածել է vulgatni արտայայտութիւնը:

⁵ Աւետարանների բնագրական հարցեր քննարկելիս Ֆ. Մակլէրը համեմատութեան է առել Թ.-ԺԱ. դարերի 10 թուակիր գրչագիր (տե՛ս նրա՝ La texte arménien de l'Évangile d'après Matthieu et Marc, Փարիզ, 1919): Յակոբ Անասեանը մինչեւ ԺԱ. դարի վերջը ընդօրինակուած 15 թուակիր Աւետարան է ցուցակագրում Երեւանի Մատենադարանի հաւաքածոյում (Անասեան, «Հայ Համարարբառային Գրականութիւնը Եւ Հայ Մատենագրութեան Համարարբառը (Աղբիւրագիտական Եւ Բնագրաքննական Ուսումնասիրութիւն)», էջմիածին, 1971, առանձնատիպ, էջ 16-17), հմմտ.՝ Անասեան, «Աստուածաշունչ Մատենանի Հայկական Բնագիրը (Քննական Ուրուագիծ)», Մանր Երկեր, Լոս-Անջելէս, 1987, էջ 33-34: Հայաստանում քրիստոնէութեան հաստատման 1700ամեակին նուիրուած Վազգէն Վեհափառի Աւետարանը. Ժ Դար նմանահանութիւնը, ցաւօք, կրկնել է Հազարեան Աւետարանի 1899ի հրատարակութեան անկատարութիւնը եւ չի հետեւել գլխաբաժանումներն ու տնահամարները լուսանցում նշանակելու Մակլէրի վաղուց (1923) կիրառած օրինակին:

⁶ Անշուշտ նշանակալի ձեռքբերում պիտի համարել Մարտիրոս Մինասեանի կազմած Աւետարանների Հիսկատար Համարարբառներ հրատարակութիւնը (Վիեննա, 1991), որի բնագրային հիմք է ծառայել Գարագաշեանի 1895ի Պոլսի հրատարակութիւնը: Մեզ զբաղեցնող հնագոյն ձեռագրերի ընթերցումները այստեղ, բնականաբար, չկան:

⁷ Խնդրիս հանգամանալի քննութիւնը տե՛ս՝ Անասեան, Մանր Երկեր, էջ 30-37:

⁸ Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրութեամբ՝ Ա. Ս. Մաթեւոսեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1988, էջ 55 (N 69), 107-108 (N 127): Յիշատակագրութիւնների ժամանակի եւ նրանցում յիշատակուող անձանց ինքնութեանը վերջերս անդադարձաւ աղբիւրագէտ Գէորգ Տէր-Վարդանեանը

(«Ստեփանոս Եպիսկոպոս Յակովբացի, Մականուն Տիրացու, ԺԲ Դար (Նորայայտ Դիմանկարի Առիթով)», *Հիմնադրված*, 2004, Բ-Գ, էջ 107-108):

⁹ Ա. Մաթեոսյան, «Նուիրական Ձեռագիրը», *Գրական Թերթ*, 1973, Յունիսի 15:

¹⁰ Ն. Թաճիզեան, «Անանիա Նարեկացու Եւ Նարեկայ Վանքի Երաժշտական Աւանդոյթների Մասին», *Հիմնադրված*, 1976, Թ, էջ 29-37; Հ. Հ. Թամրազեան, *Անանիա Նարեկացի-Կենսաբան Եւ Մատենագրութիւնը*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1986, էջ 34-37: Մենք ղգուարանում ենք պնդել, թէ Նարեկացի Անանիային պիտի անպայմանօրէն վերաբերի ձեռագրի 1v էջում պատկերուած խաչի կապտաւուն ֆոնին սպիտակ բոլորգորով եղած յիշատակութիւնը. «Անանիայի է սուրբ Աւետարանս. Աստուած վայելել տացէ ի կամս իւր, ամէն»: Այն խաչի հետ նոյնութեամբ կարող էր ընդօրինակուել Նարեկացի Անանիային պատկանող գաղափար օրինակից, բայց եւ կարող էր պատկերուել ու մականգրուել նաեւ նոր ստացող Անանիա Վարդապետու յանձնարարութեամբ:

¹¹ Ուխտանէս Եպիսկոպոս, *Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ*, 1871, էջ 7-15 (վերջին էջում նա կոչուած է «հռչակաւոր հոգևոր»), հմտ.՝ *Ստեփանոսի Տարօնացույ Աստղական Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետրերուրգ*, 1885, էջ 178:

¹² Տե՛ս՝ Ilia Abuladze, "QarTuli Da Somxuri Literaturuli UrTierToba 9-10ss" (Վրաց Եւ Հայ Գրական Փոխարարութիւնը 9-10րդ Դարերում), *Թիֆլիս*, 1944, էջ 95, 195-196; հմտ.՝ Գալուստ Տէր-Մկրտչեան, *Հայագիտական Ուսումնասիրութիւններ*, գիրք Բ. աշխատասիրութեամբ պրոֆ. Պ. Հ. Յակոբեանի, *Հիմնադրված*, 1998, էջ 134-135: Ինչպէս երեւում է, Տէր-Մկրտչեանը Տաճատ Վարդապետին վերաբերող այլ տեղեկութիւններ էլ է ունեցել, ուստի մտադիր է եղել նրան վերադառնալ «ուրիշ անգամ»:

¹³ Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 107: Օննիկ Եգանեանի ձեռագիր ընդօրինակութեան մէջ կան վերծանման որոշ տարբերութիւններ. փարթաւանամ յիարթանամ, բանի եւ հրամանի լանին Աւետարանի, տնահատի տնհատի: Արդարացուածը, ինչպէս ցոյց տուեց ընագրական ստուգումը, հրապարակուածն է: Այս յիշատակարանի վերաբերող որոշ արծարծումներ տե՛ս՝ Գիրք Մենդոց, քննական բնագիր, աշխատասիրութեամբ Ա. Ս. Չէյթունեանի, Երեւան, 1985, էջ 67, նաեւ՝ Շահէ արք. Աճէմեան, *Ցուցակ Աստուածաշուքի Մատենի Հայերէն Ձեռագիրներուն*, Լիզպոն, 1992, էջ XIV:

¹⁴ Գարեգին Ա. կաթողիկոս, *Յիշատակարան Ձեռագրաց (Ե. Դարից Մինչեւ 1250թ.)*, հատ. Ա., Անթիլիաս, 1951, էջ 321: Հմտ.՝ Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 142: Ս. Սահակին պատկանող կամ թերեւս նրա ձեռքով գրուած Աւետարանի մասին յիշատակութիւն կայ նաեւ Ս. Շուշանիկի «Վկայարանութեան» հայերէն ընդարձակ տարբերակում. «Եւ ունէր Աւետարան մի փոքրիկ, որ էր նախնոյ նորա Սրբոյն Սահակայ, զոր ընդ իւր ունէր եւ նովա աղաչէր զԱստուած ի ծածուկ» (Պ. Մուրադեան, *Սուրբ Շուշանիկի Վկայարանութիւնը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1996, էջ 26): Աւետարան ունենալու մասին խօսուած է նաեւ հին վրացերէն բնագրում, սակայն չի մասնաւորեցուած Ս. Սահակին պատկանելը (անդ. էջ 79):

¹⁵ «Մաստրովբոս»ի կապակցութեամբ տե՛ս՝ Նիկողայոս Աղոնց, «Մաշտոցը Եւ Նրա Աշակերտները Ըստ Օտար Արիւնդների», *Մշարույ Մաշտոց*, յղուածների ժողովածու, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1962, էջ 199-241:

¹⁶ Տարբերութեցումներում տողադարձի ըն նկատի չի առնուած:

¹⁷ Անասեան, էջ 37:

THE GREATEST POET OF THE 16TH CENTURY GRIGORIS AGHTAMARTSI

(Summary)

OBSERVATIONS ON THE GOSPEL THAT HAS BEEN TRADITIONALLY CONSIDERED A COPY FROM THAT OWNED BY SAINT MESROP

16th century Armenian poetry to the times. Several poets active in this period, both on and off the Armenian highland, continue the best poetic traditions of the previous centuries. Their works are closer to the

(Summary)

PARUYR MURATIAN

Muratian raises the concern of restoring the classical text of the original Armenian translation of the Bible. In this regard he draws attention to a manuscript that was presented to the Mesrop Mashtots Maternadaran, Institute of Old Manuscripts in 1969. He claims that there is no reason not to believe that it could be a copy from the manuscript that belonged to Mesrop Mashtots.

After highlighting a number of important textual differences, Muratian argues that one needs to take the above-mentioned manuscript into consideration when any attempt to reconstruct the classical text of the original Armenian translation of the Bible is to be made. allegory by which Grigoris expresses his worldly feelings and thoughts, the dilemma of serving the demands of both body and soul, the human aspect of the characters Grigoris depicts and the aesthetic means he uses in his endeavor.